ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 468 - Ա

17 սեպտեմբերի 2021 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի N 195-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2020 թվականի մայիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքերն ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրելու նպատակով հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2009 թվականի հոկտեմբերի 30-ի N 68–Ա կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 195-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքերն ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրելու նպատակով եզրակացություն տրամադրելու համար ստեղծել մարզային հանձնաժողով հետևյալ կազմով՝

Սարգսյան Կարեն	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետ, հանձնաժողովի նախագահ
Պետրոսյան Մարտին	- մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Ղուրշուդյան Մարատ	- մարզպետարանի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի պետ
Գասպարյան Սևակ	- մարզպետարանի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի պետի տեղակալ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համապատասխան համայնքի ղեկավարը /համաձայնությամբ/

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համապատասխան համայնքապետարանի գյուղատնտեսության գծով մասնագետը /համաձայնությամբ/»:

17.09.2021

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ